# Պաշտոնական կարծիք

## Աստղիկ Լևոնի Խուրշուդյանի

**«Իրավական պետության հայեցակարգի ձևավորումը և զարգացումը իրավական ուսմունքների հոլովույթում» թեմայով ԺԲ 00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ**

Գրախոսության ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավական պետության ձևավորման և զարգացման վերաբերյալ տեսական հայեցակարգերի բննական վերլուծությանը:

Գրախոսվող հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է, ամենից առաջ, մեզանում իրավական պետության կայացման հիմնախնդրի հետ:

Քննարկվող թեկնածուական ատենախոսությունը շարադրված է սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության քննական վերլուծության արդյունքների հիման վրա, ինչի շնորհիվ հետազոտությունը ներկայանում է գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված:

Գրախոսվող աշխատանքի հիմնական խնդիրներն են.

1. բացահայտել իրավական պետության հայեցակարգի պատմական զարգացման օրինաչափությունները, դրանց էությունն ու առանձնահատկությունները,
2. լուսաբանել «իրավական պետություն» համակարգված հայեցակարգը իրավաքաղաքական ուսմունքների համատեքստում,
3. բացահայտել «ժողովրդաիշխանություն», «պետական իշխանություն», «իրավական պետություն» եզրույթների բովանդակային առանձնահատկությունները,
4. առանձնացել և հիմնավորել սոցիալ-իրավական պետության կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում:

Քննարկվող ատենախոսության ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ հեղինակը իր առջև դրված խնդիրները լուծել է պատշաճ գիտական մակարդակով:

Ներկայացրած ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը ուրույն մոտեցում է դրսևորել իրավական պետության բնորոշման և մեկնաբանման առումով, մասնավորապես ըստ հեղինակի՝ իրավական պետությունը ոչ միայն զուտ պետական կառուցակարգի ձև է, այլև «կենդանի իրավական օրգանիզմ», որին բնորոշ է հասարակության պահանջներին անմիջական արագ և որակյալ արձագանքումը, իրավունքի սահմաններում

հանրային և անհատական շահերի ողջամիտ զուգակցումը և լուծումը, հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բանական պահանջմունքների բավարարման համար համապատասխան սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց նախաձեռնությունների խրախուսումը, աջակցումը, հանրային իշխանությունների պարբերաբար հաշվետվողականության և իրենց սոցիալական պատասխանատվության ապահովումը: Աշխատանքում հիմնավորվում է նաև այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի՝ ժամանակակից պետականության զարգացման արդի փուլում «իրավական պետությունը» տրանսֆորմացիայի է ենթարկվում «սոցիալ իրավական»պետության, որի հիմնական առանձնահատկություններից է ոչ միայն «իրավունքով կառավարելը», այլ նաև իրավունքի միջոցով ստեղծել «սոցիալական արդարության» սկզբունքի կենսագործման ապահովումը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում: Սոցիալ-իրավական պետության բոլոր գործառնական լիազորությունները ոչ միայն սահմանափակվում են իրավունքով, այլ դրանք ուղղված պետք է լինեն մեկ հիմնական նպատակի իրականացմանը. անհատի իրավունքների երաշխավորված պաշպանությանը, բարեկեցիկ և անվտանգ կյանքի ապահովմանը:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը ձևակերպել է տեսական հետևություններ և գործնական առաջարկություններ, որոնք ունեն տեսական և գործնական-կիրառական նշանակություն:

Ընդհանուր առմամբ՝ դրական գնահատելով գրախոսվող աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

**Առաջին.** գտնում ենք, որ աշխատանքի 2-րդ գլխի առաջին ենթագլխում հեղինակը խոսել է սոցիալ-իրավական պետության կայացման իրավական նախադրյալի մասին. սակայն, մեր կարծիքով, հանգամանորեն կանգ չի առել ոչ պակաս նշանակություն ունեցող սոցիալական, տնտեսական, քաղաքական նախադրյալների վրա, որոնք իրավականի հետ կազմում են իրավական պետության կայացման համալիր նախադրյալներ:

**Երկրորդ.** նույն գլխի երկրորդ ենթագլխում հեղինակը, ըստ էության, չի պարզաբանել, թե խոսքը սահմանադրական փոփոխությունների, թե՞ նոր սահմանադրության մասին է: Իհարկե, դա ունի որոշակի օբյեկտիվ պատճառ, քանի որ նույնիսկ պաշտոնական մակարդակով որոշակիացված չէ գործող սահմանադրական հանձնաժողովի խնդիրը հիշյալ հարցով, բայց այդուհանդերձ գիտական աշխատանքը և ակադեմիական ազատությունը թելադրում են, որպեսզի հեղինակը ճշգրտի իր սեփական մոտեցումները այս հարցում:

Արված դիտողությունները բնավ չեն նսեմացնում կատարված աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի բովանդակությունը լիարժեքորեն է արատացոլված հեղինակի կողմից հրատարակված մենագրությունում և յոթ գիտական հոդվածներում:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ Աստղիկ Լևոնի Խուրշուդյանի «Իրավական պետության հայեցակարգի ձևավորումը և զարգացումը իրավական ուսմունքների հոլովույթում» թեմայով ԺԲ 00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ավարտուն հետազոտություն է, լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
Պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Հ.Մ. Ստեփանյան

Պրոֆեսոր՝ Հովհաննես Միքայելի Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու՝

Հայկ Նազարյան